ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14.1/[66718]-11

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՄԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 22-ԻՆ ԺԱՄԸ 12:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ <<ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Վ. Գաբրիելյան	ՀՀ ֆինանսների նախարար
Ա. Աշոտյան	ՀՀ կրթության և գիտության նախարար
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Ա. Ղազարյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության նախագահ
Ռ. Թոփչյան	<<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամի տնօրեն
Գ. Մարգարով	Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի տեղեկատվական անվտանգության և ծրագրային ապահովման ամբիոնի վարիչ
Ժ. Կարաասլանյան	<<Լույս>> մշակութային, գիտական, կրթական հիմնադրամի գործադիր տնօրեն
Բ. Փափազյան	Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի գործադիր տնօրեն
Ա. Կարապետյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ
Ս. Սիմոնյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության գլխավոր մասնագետ
Ս. Կարախանյան	<<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամի վարչության ղեկավար

1. Հիմնադրամի 2010 թվականի տարեկան հաշվետվության քննարկում և ընդունում

(Ռ. Թոփչյան, Տ. Սարգսյան)

1. <<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամի տնօրեն Ռ. Թոփչյանը ներկայացրեց <<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամի (ՈԱԱԿ) գործունեության երկրորդ տարվա հաշվետվությունը և նշեց, որ 2009 թվականը մշակումների տարի էր, իսկ 2010 թվականը մշակված արդյունքների փորձարկման տարի, և ըստ այդմ տարվա վերջին ՀՀ կառավարության քննարկմանն են ներկայացրել հավատարմագրման չափորոշիչներն ու չափանիշները և ընթացակարգերի նկարագիրը, ինչպես նաև հավատարմագրման կարգի նախագիծը:

Տեղեկացրեց նաև, որ 2010 թվականին Համաշխարհային բանկի միջազգային փորձագետների աջակցությամբ կազմել են հինգ ծրագրեր և դրանց միջոցով կատարել են մի շարք հարցումներ՝ ՄՈՒՀ-երի շրջանում համընդհանուր մոտեցումների ընկալման դաշտ ստեղծելու և հետագա գործընթացների իրականացման համար: Նշեց նաև, որ հայտարարել են 11 գրանտ ՀԲ-ի կողմից՝ որակի ներքին ապահովման համակարգերի ստեղծման համար և այդ գործընթացում շահակիցներին ՈԱԱԿ-ը ուղղորդում է, որպեսզի ստեղծվեն այդ համակարգերը: Նույն ծրագրի շրջանակներում վերանայվել և միջազգային փորձագետների կողմից վավերացվել է 2010-2015 թթ. ՈԱԱԿ-ի ռազմավարական ծրագիրը, որն անհրաժեշտ է ճանաչման և, հետևաբար, միջազգայնացման համար:

Տարվա ընթացքում ՈԱԱԿ-ը վերանայել է իր աշխատանքային մեթոդը և համապատասխանեցրել է այն եվրոպական մակարդակում տեղի ունեցած վերջին զարգացումներին՝ եվրոպական չափորոշիչներն ու ուղեցույցներն ընդունելով որպես ուղեցույց: Ավելին, նոր մոտեցումներին համապատասխան մշակված որակի ապահովման չափանիշները և

չափորոշիչները փորձարկվել են և ընդունվել են մասնակից ՄՈՒՀ-երի կողմից: Ըստ փորձարկման մասնակից մասնագիտական ուսումնական հաստատությունների արձագանքի՝ ՈԱԱԿ-ի աշխատանքային նոր մոտեցումներն արժանացել են բարձր գնահատականի և համարվում են համակարգի բարեփոխումների իրականացմանը նպաստող:

Տեղեկացրեց նաև, որ 2010 թվականին ՈԱԱԿ-ի կողմից մշակված չափանիշներն ու չափորոշիչները փորձարկվել են երկու հիմնական շրջափուլերով՝ ծրագրային հավատարմագրում և ինստիտուցիոնալ փորձաքննություն, որոնց մասնակցել են 10 մասնագիտական ուսումնական հաստատություն՝ պետական, ոչ պետական, քոլեջներ և համալսարաններ:

Միջազգային հարաբերությունների բնագավառում նույնպես ՈԱԱԿ-ը մեծ հաջողություններ է հասել՝ ակտիվորեն ներգրավվելով բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական զարգացումներում՝ մասնակցելով TEMPUS գրանտային ծրագրերին և միջազգային երկխոսությանը՝ արտահայտելով իր դիրքորոշումը որակի ապահովման զարգացումների շուրջ:

Արձանագրվել են մի շարք մարտահրավերներ՝ համակարգում միասնականության բացակայություն, անցումային շրջանում բուհերի ղեկավարության կառավարման կարողությունների պակաս, անկախության սահմանափակ ընկալում՝ միայն ֆինանսական մասով:

3. Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել <<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամի 2011 թվականի տարեկան հաշվետվությունը:

2. Հիմնադրամի 2011 թվականի գործողությունների պլանի քննարկում և ընդունում

(Ռ.Թոփչյան, Տ. Սարգսյան)

1. <<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամի տնօրեն Ռ. Թոփչյանը նշեց, որ 2011 թվականը համալսարաններում ներքին որակի ապահովման համակարգեր ներդնելու գործընթացն է: Տեղեկացրեց նաև, որ Երևանի

ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում կիրականացնեն ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն և մասնագիտության կրթական ծրագրի պետական հավատարմագրման փորձարկում, ինչպես նաև երեք միջին մասնագիտական հաստատություններում ևս պետք է իրականացնեն փորձարկումներ: Հավելեց նաև, որ Հոլանդիայի և Բելգիայի որակի ապահովման կենտրոնը շահել է ՀԲ-ի գրանտը և իրենց աջակցությունն են առաջարկել այս գործընթացների հետ կապված, ինչպես նաև պետք է իրենց մասնակցությունն ունենան նաև փորձաքննությունների անցկացման ժամանակ:

Անդրադառնալով մասնագիտական կրթության որակի ապահովման հավատարմագրման կարգին, ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանի կողմից ներկայացված տարբերակին (ինստիտուցիոնալ հավատարմագրման)՝ նշեց, որ դա բավականին մեծ ռիսկ է պարունակում, քանի որ ենթադրում է, որ ուսումնական հաստատությունը հավատարմագրված է և ծրագրերը բարձր որակի են, որն իրականությանը չի համապատասխանում:

3. Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել <<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամի 2011 թվականի գործողությունների պլանը.

2) հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանին՝ ՀՀ-ում նախնական (արհեստագործական), միջին և բարձրագույն մասնագիտական հինական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների կրթության որակի արտաքին գնահատման ապահովման (ինստաիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման) հավատարմագրման կարգի նախագիծը և վերջինիս հետ առնչվող ՀՀ օրենքներում փոփոխությունների նախագծերը դնել շրջանառության մեջ:

3. Հիմնադրամի կանոնադրական նպատակների իրականացման համար հիմնադրամի տիրապետությանն է հանձնվել տարածք

(Ռ. Թոփչյան, Տ. Սարգսյան)

1. **<<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամի տնօրեն Ռ. Թոփչյանը** տեղեկացրեց, որ ՀՀ ԳԱԱ-ի նախագահ Ռ. Մարտիրոսյանի հետ համատեղ քննարկել են տարածքի տրամադրման հետ կապված հարցը և վերջինիս կողմից ստացել են համաձայնություն: Նշեց նաև, որ այդ աշխատանքներն իրականացնելու համար կպահանջվի մոտավորապես 72.0 մլն դրամի չափով գումար, որի նախահաշիվը պատրաստ է:

2. **Քննարկումներից հետո որոշվեց՝** հանձնարարել <<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամի տնօրեն Ռ. Թոփչյանին՝ հիմնադրամի կանոնադրական նպատակների իրականացման համար հիմնադրամի տիրապետությանը հանձնված տարածքի վերանորոգման նպատակով կազմված նախահաշիվը ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարար Վ. Գաբրիելյանին՝ կարծիքի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ